Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Lbn
1174

1999 1.

[illegible]

[illegible]

# ՀՌՈՎՄԷԱԿԱՆ

# ՊԱՐԳԵՒ

ԼԷՕԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՇԱՐԱԴՐԵՑ

ՉԱՐԱՓԱՌ ՀԱՅ ՄԸ.

ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԵԱՆ

1 Յունվար 1854

ԲԵՏՐԱՔ ԹՈԽՄԱՃԵԱՆ
BETRAK TOKHMADJIAN

41174-60

Zф. 1176

# ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՊԱՐԳԵՒ

Ազատատեաց մարդուն անունը ինչ է ։
— Գերի ։
Թշնամանող կրօնաւորին անունը ինչ է ։
— Մոլի ։

Օգոստոս ամսուն վերջերը ենք ․ ժամը հինգ—վեցը կայ , արեւը իր ոսկեգոյն ճառագայթները առկաւ առ-առկաւ ամփոփելու վրայ է ․ Վենետիկի ծովը հանդարտ հայելիի մը կը նմանի , եւ ամէն կողմէ զարմանալի կերպիւ արեւին բոլորակը կը ցոլացընէ ։ Ոչ հով կայ , ոչ մրրիկ եւ ոչ տաքութիւն ։ Աշունը , թալկադէմ բայց սիրուն աշունը , իր մէկ թեւը արդէն քաղաքին վրայ տարածած կ'երեւի ։ Բազմաթիւ ժողովուրդը Ս․ Մարկոսի հրա-պարակին մէջ զինուորական նուագածութիւնը մտիկ ը-նելու համար ափ 'ի բերան կը զմայլի ։ Կառավարուն կի-ները իրենց սիրականները թեւերնին առած ծովեզերին վրայ կը պտըտին ․ մարդիկներու կուրծքէն հեշտութիւն կը բուրէ , թեթեւամիտ օրիորդներու աչւիներէ բոց ու կրակ կը թափի , կայտառ մանկտին ասդին անդին կ'եր-թայ կու գայ եւ սիրահարներու բոլորտիքը անհանգըս-տութիւն կը պատճառէ ։ Ամէն կողմ , զարդ եւ զարդա-րանք ․ ամէն կողմ , զուարճութիւն եւ զուարթութիւն , ամէն կողմը , սա՛ անիծեալ եւ անցաւոր աշխարհի զբօսանք-ները գրաւեր առեր են ։ Քաղաքացիներու խումբը , ա-մէն կողմէ բազմաճղի հոսանքի պէս , այն զբօսանքի հը-

ճապարակը կը թափի և իր մարմինը յագեցնելու կը ցանկայ ։ Ծ՛իրանի ծովին վրայ օրիորդները Յաւերժահարսերու պէս փրփուրներու մէջէն մակոյկներով կը սահին կ'անցնին կ'երթան · իրենց անոյշ ձայնը դէպ 'ի երկինք կ'ելլէ, իրենց հոտաւէտ շունչը ծովին բարակ հովին հետ կը միանայ ։ Ամէնքն ալ իրենց փափուկ թեւերը յոյսին տուած և սիրտերը երջանկութեան նուիրած կարծես թէ երկրաւոր ըղձալին մոռցեր են, և միայն հեշտութեան համար կ'ապրին, և հեշտալի ճարակ մը գտնելու համար երկրի և ծովի վրայ անդուլ անդադար շուրջ կ'առնուն կը ճեմեն ։ Բոլոր քաղաքին մէջ տրտմութեան ձայն մը չը լսուիր · հառաչանքի ճիչ մը, արցունքի կաթիլ մը չեն ցայտեր ծովին ծիծաղկոտ երեսին վրայ ։ Այր և կին, ծեր և մանկունք, հարուստ և թշուառ; ամէնքն ալ երթևեկի ու շարժման մէջ են, ամէնքն ալ սիրոյ և զբօսանքի երկանիւ կառքը կամ երկթի նաւը հեծած դէպ 'ի մոլութիւն կ'արշաւեն կ'իյնան, կ'երթան ։

Վենետիկ քաղաքին դիմացը երևելի կղզեակ մի կայ, երևելի և օրհնեա՛լ կղզեակ · ուր երկրաւոր զբօսանքի և ոչ տուները անգամ կը տեսնուի, ուր ճշմարիտ սէրը միայն տաճար մը ունի, ուր միայն հոգևոր երաժշտութիւններ կը լսուին, ուր առաքինութիւնը և հանդարտութիւնը կը թագաւորեն ։ Աստուածային նուիրական սէրը ամէն բնակիչներու սրտին մէջ անշէջ կը վառի, հայրենեաց ազնիւ սէրը ամէն կողմ պատեալ պաշարեալ է այս օրհնեալ կղզին ։ Երբ երկնային գոհութիւններու ձայնը կը դադրի, մունջ լռութի մը կ'իջնէ անոր վրայ, և հազիւ թէ պահէ 'ի պահ քաղաքի հեշտութեան շշուքին արձագանգը օդերևոյթի պէս անոր վրայէ կը թռչի կ'անցնի ։

Ի՛նչ զարմանալի հանդիպապատկեր (քոնդրաստ) ։ Վենետիկի մէջ զբօսանքի ծարաւ մը ամէն սիրտեր կ'այրէ կը լափէ · անոր դիմացի կղզին մէջ հայրենասիրութեան ծարաւը ամէն սիրտեր կը չարչրէ ։ Վենետիկի մէջ մի-

այն անհօգի մարմիններ, զրեթէ դիակներ կը տեսնուին և հողեղէն իրաց մէջ թաւալգլոր կ'ապրին ։ Ս. Ղազարու մէջ ընդհակառակն անմարմին հոգիներէ ուրիշ էակներ չկան · որոնք իրենց կենաց մեծագոյն մասը երկնաձեմ շրջագայութեամբ կ'անցընեն և ակամայ ոտքերնին երկրի վրայ կը դպցընեն ։ Վենետիկի մէջ ծովը իր ալիքներովը, փրփուրներովը, մռնչիւնովը կը մտնէ ու կ'ելլէ, և կարծես թէ իր ժողովրդեան կիրքերուն յայտարարը... յարացոյցն է · Ս. Ղազարու գանէն անդին ալիք մը, կամ մը փրփուր, չեն անցներ, փրփուրը անձայն չիք կ'ըլլայ և ալիքները մռնչելով կ'իյնան կը փշրին անոր քարակիր պատին ներքեւ ։ Նոյնն այս կղզիի բնակիչներուն ։ Վա՛յ քեզ Վենետիկ քաղաք, վա՜յ քեզ Թագուհի ծովերու ։

Իրիկունը արդէն բաւական յառաջացեր էր · բաւական ժամանակ էր որ ժողովուրդը տուն տեղ ձգեր և հրապարակներու մէջ ու ծովեզերքի վրայ կը զբօսնուր · . . . . . . քիչ քիչ արեւը կ'ըսկսի ալ չտեսնուիլ · իր խոտորեցուցիչ երեսին վրայ՝ հորիզոնին կողմէ բարակ ամպ մը կ'իյնայ և կը բոլորէ զայն, կարծես թէ այն փայլկենին մէջ աշխարհի լուսատուն աչքեր կոյսի կարմրագոյն կերպարանքը ու նայուածքը ունէր, և դեռ մարը չմտած վրան անճառելի գեղեցկութիւն մը ծագած է . . . . . . Հորիզոնէն քիչ մը վեր, երկինքը շատ մաքուր ու պայծառ է և զինքը սիրող՝ թշուառ սիրտերու հոյակապ գիշեր մը և աստեղալի տեսարան մը կ'աւետէ ։ Կամաց կամաց ժողովուրդն ալ սիրտը սիրով զեղեալ, աչքը զբօսանքէ յագած, ականջը նուագածութենէ յոգնած, կ'ըսկսի ցրուիլ և անհամբեր փութով դէպ 'ի սեղանատունները վազել, որպէս զի փորը անհանգստութիւն մը չկրէ ։ Զինուորներն ալ որ մէկ տարի առաջ քաղաքին վրայ թնթանօթ նետէին, քաղաքացիներուն ականջը խլացուցին, հիմա կարծես թէ իրենց ըրածը մոռցընելու համար չափէ դուրս սիրով և մարդավարութեամբ յանձն կ'առնուն զանոնք զբօսցընել և երբ քաշուելու ատենը չ'ուզելով կը բաժնուին ու կը դադրեցընեն ի-

րենց հրաժշտութիւնը . . . . . Արդէն Ս. Մարկոսի հրապարակը գրեթէ դատարկ է. և միայն քանի մը յուսակորոյս կամ սիրակորոյս անձինք գետնին քարերը համրելով կը շրջին կը շրջշրջին . . . . Մէյ մըն ալ յանկարծ դիմացէն, Ս. Ղազարու վանքէ, ձայն մը կ'ելլէ. պատուհաններէ մէկը կամացուկ մը կը բացուի և չքնաղ կերպարանք մը կը տեսնուի հեռուէ: Երևելի Բ ցին կերպարանք է այն. սև լաթերով, սև աչքերով, սև ընքուներով սև մօրուքով, և հոյակապ ճակատով: Սակայն ծանր շարժմունքով մը պատուհանին փեղկը կը հրէ, ծանր բայց ազնիւ, շարժմունքով մըն ալ իր գլուխը դուրս կը հանէ կը ծռի, կը նայի, և պահ մը աչքերը կապոյտ ծովին վրայ պտըտցընելով դէպ 'ի արևմուտքը կը դարձընէ զանոնք և անշարժ զմայլեալ կը մնայ . . . . Յափշտակիչ աղջիկ մը իր հրեշտակային դէմքովը երբէք այնչափ չզբաղեր բանաստեղծ մը, որչափ սա մերկանդամ և շռայլ բնութիւնը. աներկբայ այն վայրկեանին մէջ անիկա ալ ուրիշ բանով չէր զբաղած, անիկա ալ բնութեան գեղեցկութիւնը կը նշմարէր և բնութեան տեսքովը իր միտքը և սիրտը կը յափշտակուէին: Բնութիւնը այնպիսի տեսարան մը կը ներկայացընէ հասարակօրէն ուշադիր և բանաստեղծ մարդու, որ հնար չէ անոր աչքը անտարբեր կենալ. միտքը կամ կ'ապշի և դէպ 'ի երկինք կը թռչի և Արարչին աթոռին ներքևը ձեռնամած կ'աղօթէ, կամ երկբայութեան մէջ ծփելով կոծելով դէպ 'ի երկրիս անյատակը կ'իջնէ և կ'ըսկսի անհաւատութեան կամ յուսահատութեան դռները զարնել . . .

Տարակուսելու չէ թէ այն վայրկենին մէջ կղզեցիին միտքը դէպ 'ի երկինք ելած էր, և ջերմ հաւատոյ ասպարէզին մէջ կ'արշաւէր. ատոր վրայ տարակուսելու չէ կ'ըսեմ, ինչու որ յիշեալ կղզիին բնակիչները վտարանդի և սուրբ կրօնաւորներ են: Վերոյիշեալ բարեշուք անձը բաւական ժամանակ անշարժ դիտելէն ետքը, չեմ գիտեր աչքին ինչ երևոյթ կը դպչի. ականջին ինչ արձագանգ կը հասնի, սիրտը ինչ նշանով կը գրաւի և կ'ա-

լեկոծի, որ կամաց կամաց եռ.քաշուելով ձեռքը դէպ ի մօրուքը կը տանէ և բոլորովին այլ յայլմէ կ'սկսի տրտում կերպիւ մը հառաչել և ա՛հ ու վա՛հ ընել ։ Վախնամ որ սևուկ գաղափարներու հոյլ մը իջաւ իր միայնակեաց գլխուն վրայ և ամէն դիէ պաշարեց զայն . . . .

Այն ատենը, արևմուտք, ծով, երկիր, երկին, ամէն բան աչքին առջևէ աներևոյթ կ'ըլլան․ ամէն բանը կը ձգէ ներս կը քաշուի, կ'երթայ իր աթոռին վրայ կ'իյնայ և վիրաւորեալ սիրողի պէս աչքերը իր ձեռքերովը կը գոցէ, որպէս զի երկրաւոր և խաբող մարմիններն անգամ չի տեսնէ ։

Բայց ողորմելի անձը որչափ որ բերանը կը կղպէ, աչքերը կը ծածկէ, կը պատէ․ իր սիրտին մրրիկը, այնչափ կը զօրանայ և կուրծքին ելևէջէ յայտնի կը տեսնուի թէ՝ ինչ ծովակոծութեան մէջ է իր բոլոր անձը . . . . . . Մէկ քառորդ այսպէս կենալէ ետև յանկարծ իր թալկագոյն շրթունքը կը դողան, կզակը կը շարժի, ակռաները կը կափկափին, բերանը կը բացուի, աղիողորմ հառաչանք մը դուրս կ'իյնայ, և աս խօսքերը կը լսուին համր լռութեան մը մէջ ։

“ Վա՜յ իմ գլխուս որ ասանկ օրերու հասայ . . . ”

Ի՞նչ կը նշանակէ արդեօք աս վայնասունը . . . ի՞նչ կը նշանակէ աս սրտաշարժ հառաչանքը . . . որո՞ւ վրայ կուլայ կ'ողբայ անիկա, որո՞ւ համար այսպէս կը հալի կը մաշի . . . Արդեօք Վենետիկի ժողովրդեա՞ն վրայ արցունք կը թափէ, որ իր կիրքերուն մահածին փրփուրներուն վրայ անհոգ կ'երգէ, կը խաղայ, կը ցայտէ․ կամ թէ ան սուրբ հայրենասիրաց վրայ, որ իրենց ազգին ազատութեան համար մեռան և հիմա ափ մը հողի տակ անցուորներու, ապաշնորհ անցուորներու, ոտքին կոխան կ'ըլլան . . . Արդեօք վտարանդութեան անտանելի զրկումներու վրայ կը հեծեծէ, կամ թէ ուրիշ ազգերը մէկ դի թող տալով, բուն իր ազգին թշուառութեանը վրայ սիրտը այրեւացուեր կ'ըլլայ ։

Եթէ Օգոստոս ամսուն Բոլոնիէյ ըսուած հռովմէական

ամսաթերթը բանանք, մէկէն կ՚իմանամք թէ աս եղբի կար-ծիքը միայն խրատ է ։ Այն դիւրագրգիռ կրօնաւորը մեր անոք և անօգնական ազգին վրայ արցունք կը թափե-եղեր ։

Յիշեալ ամսաթերթին պատմածին նայելով, կ՚երեւի թէ ասիկա ան օրը իր սովորութենէ դուրս ելլելով, լը-րագիր կարդալու թանգարան մը կը մտնէ · հոն ժամե-րով մնալէն և ամէն լրագիրները աչքէ անցընելէն ետքը իրիկուան դէմ վանք դառնալու ատենը կ՚ուզէ իր կար-դացած նիւթերու վրայ փիլիսոփայի պէս, համեմատու-թիւններ ընել, կշռել, կշռադատել, գաղափարները լուծել, յօդել և անկէ հետեւութիւններ հանել, և եթէ հնար է, ինքն ալ նոր գաղափար մը իր կողմէ գտնել ։ Կ՚երեւի նաև թէ՝ լրագրապետի մը [illegible] և [illegible] խօսքը զինքը մասնաւորապէս գրաւեր է, ինչու որ այս լրագրապետը իբրև ընդհանուր դատաւոր երկրի ամէն բանի վրայ իր միտքէն ինչ որ անցեր է, գրեր, տպեր, հրատարակեր է, և այն՝ վճռաբար ։ Ս. Ղազարու կրօ-նաւորը սոր բանին վրայ մեծապէս զայթակղած, ծան-րակշիռ մտածմունքներով մինչև վանքը կը հասնի · ոչ մարդիկ, ոչ փողոցներ, ոչ հրապարակներ, ոչ նաւեր, ոչ ծովեզր, և ոչ ծով կրնան անոր միտքը քիչ մը զբօ-սցնել և տրտմութիւնը փարատել ։ Կու գայ կը հասնի իր խցիկը կը մտնէ, և դուռը հրելով ու [illegible] հսկայա-միտ փիլիսոփային նման ինքզինքը ամփոփելով կ՚ըսկսի մարդկային բնութեան վրայ անհնարին ուշադրութեամբ մտածել ։ Իր մտածութեան առաջին հետեւութիւնը այն կ՚ըլլայ թէ՝ մարդը բնութեամբ ճշմարտութիւնը կը սիրէ և կը փը-տռէ ճշմարտութիւնը ։ Երկրորդ հետեւութիւնը այն կ՚ըլլայ թէ՝ մարդը բնութեամբ տկար է և տգէտ, ու շատ անգամ և շատ բանի մէջ կը սխալի ։ Տե՛ս մէյ մը ինչ նոր և անգիւտ մտա-ծութիւն և ինչ նորագոյն հետեւութիւններ ։

Մխիթարեան կրօնաւորը այսպէս խորհելէ ետև, [illegible] այն կողմանէ կը զարմանայ որ նոյն մարդը միշտ ճշմար-տութիւն և հնարագիտութիւն կը բանեցընէ [illegible] իր մտածմանը մէջ,

Իր խօսքերուն և իր գործերուն մէջ․ և ինքն ալ իր մտքէ այս հետևութիւնը կը հանէ թէ՝ մարդուն սատանութիւն և հնարագիտութիւն բանեցընելը իր մտքին անհաստատ կարծիքը կամ ծուռումուռ գաղափարը իբրև ճշմարտութեան ուրիշներուն կլլեցընել տալու համար է ։ Յիրաւի երջանիկ է Ս․ Ղազարու վանքը, որ այսպիսի բարեկիրթ և մեծ մտածող մը ունի իր ծոցը․ երջանիկ է այն ժողովուրդը, որ այնպիսի փիլիսոփայի մըտածութիւնը ամէն ամիս իբրև Հռովմէական պարգև կ'ընդունի, և մտածել կը սորվի ։

Փիլիսոփային միտքը ծանր քարի մը կը նմանի, կարծիքներու կամ իմաստներու երեսը չկրնար ծփել, պէտք է որ մինչև յատակը իջնէ, և ամէն բան տեսնէ ու զննէ ։ Ս․ Ղազարու կրօնաւորը այս կերպ մտածելէ և հետևցընելէ ետքը, կ'սկսի նորէն յիշեալ լրագրապետին խօսքերը միտքը բերել, որոճել, և կշռադատել ։ Ան ատենը իր իմացողութիւնը որչափ կը թափանցէ, այնքան կը լուսաւորի․ որչափ կը լուսաւորի, այնչափ արևու ճառագայթներու պէս՝ երթալով երթալով կը ծաւալի․ քիչէն բոլոր սահմանները, բոլոր անջրպետութիւնները, իրեն համար անհետ կ'ըլլան, և մէկ նկատմամբ միայն ամէն Եւրոպայ կը պատէ, կը պաշարէ ։ Աշխարհիս հինգերորդ մասին վրայ եղած բոլոր լրագիրները (բաց 'ի Բաղմավէպէ) և բոլոր լըրագրապետները աչքին առջևը կը բերէ, և իր արծուի հեռատեսութեամբը կ'սկսի անոնց բռնած ճամբան քննել, բանեցուցած նիւթերը և հնարագիտութիւնները դիտել, անոնց ըղեղը և սիրտը մէկ ձեռքին մէջ առնել և միւս ձեռքը, իր սրտին կամ գլխուն վրայ դնել, համեմատել . . . և տեսնելով որ ամէն սիրտի մէջ սնապարծութենէ կամ անհաւատութենէ ուրիշ բան չկայ, տեսնելով որ այն ամէն ըղեղները ծռած ծռմկած և գրեթէ հատած բաներ են․ վերջապէս տեսնելով թէ ամէնքն ալ զգացողութիւնը կորսնցուցեր են, և չեն իմանար ինչ վիճակի մէջ ապրելնին, մէյ մըն ալ իր

սրտին մաքրութեանը և անկեղծութեանը կընայի մէյ մըն ալ իր ըղեղին թարմութիւնը և ուղղադատութիւը կընշմարէ , և վրան արհամարհութի և զզուանք մը կու գան ․ Թշուառ անձը կ՚ըսկսի չափէ դուրս գանիլ և ուսերը վեր վերցընելով զամէնը միահամուռ մէկ րոպէի մէջ (առանց խորհուրդ հարցընելու , առանց բողոքի մը ականջ դնելու , առանց փաստաբաններու ընդդիմութեանը նայելու) մէկ րոպէի մէջ , կ՚ըսեմք , դատել , դատապարտել , գրիչը ձեռքը առնել և իր վճիռը հրատարակել բոլոր երկրի վրայ ։

Ա՜սոր ի՞նչ կ՚ըսես , սիրելի ընթերցող ։

Բայց դատաւոր մը , որչափ որ իրաւարար և իրաւասէր ըլլայ , ծանր վճիռ մը տալու առենը՝ գրեթէ միշտ սիրտը թունդ կ՚ելլէ , և շատ անգամ տեսնուած է որ իր խիղճը հանդարտ՝ բայց սիրտը այլայլած կը ծփի մարդկային ազգի թշուառութեանը վրայ ։ Այսպէս ալ Անխիթարեանը , որչափ որ խղճմտանքը կ՚ըսէր իրեն թէ՝ ըրածը իրաւ է , տուած վճիռը՝ արդար , պատիժն ալ (յանցանքին նայելով) թեթև քան թէ ծանր է , ՚ի վերայ այսր ամենայնի սիրտը չէր կրնար հանդարտիլ . . . ։ Մէկէն ահուդող մը կ՚իջնէ վրան , աչքերը արցունքով կը լեցուին , սրտին մէջ մեծ ցաւ մը կը զգայ , որ ուրիշներուն ձեռքը արդարութիւնը և ճշմարտութիւնը չնչին մը դարձեր են , և ամէն բանի ՚ի գործ կ՚ածուին ։

Ահա ան առենը պատուհանը կը բանայ , որ սիրտը քիչ մը հովերի , և բնութեան տեսքովը մոռնայ իր ցաւերը . . . . բայց զուր ջան , և փուճ յոյս ․ իր ցաւերը երթալով երթալով կը զայրանան , և սիրտը առաւել ևս կը ճմլի , կը ճզմուի , կը մնայ ․ անանկ որ , ինչպէս և ըսինք , պատուհանը կը ձգէ , ներս կը քաշուի և կը սկսի նորէն հաչել և հառաչել ։

Երբ այս ձև սգոյ և խորունկ մտածութեանց մէջ ընկղմած կը կենար , բարեկամ մը ներս կը մտնէ ձեռքը լրագիր մը առած . . . . Երևակայէ հիմա , սիրելի ընթերցող , թէ ի՜նչ կ՚ըլլայ այն վայրկենի մէջ թշուառ կրօնաւորը : : : երևակայէ

մէյ մը թէ ի՛նչ կիծ ու կսկիծ կը յաւելցընէ այն լրագիրը իր անտանելի ցաւերուն վրայ . . . երևակայէ մէյ մը թէ ի՛նչ սարսուռ կը պատէ անոր անձը . . . Ա՛լ թըշուառին վրայ քիչ մը գո՛ւթ ցըցուր, ինչու որ անիկա ալ Հայաստանեայց փառանդի որդի մ՚է՝ թէպէտ և Հռովմէական կրօնաւորներու ընակից.

Ա՜հ, բարեկամներ, անտանելի՜ բարեկամներ, ո՞ւր արդեօք փախչելու է ձեր ձեռքէ. վանքերու մէջ անգամ հանգստութիւն չկայ. հոն ալ կ՚երթաք մտածող մարդերը կը շփոթէք, անոնց ժամանակը կը գողնաք. Գիտէ՞ք արդեօք թէ ի՛նչչափ և ի՛նչպիսի վնասներ կը պատճառէք մարդկութեան, և ի՛նչ բաներէ կը զրկէք զա՛ն. Եթէ ձեզմէ մէկը այն օրը չերթար և Մխիթարեանին առանձնութիւնը չվրդովէր, աներկբայ Բազմավէպը սուտ ու փուճ խօսակցութի մը հրատարակելու տեղը՝ նոր և ընտիր գիրք մը, իբրև արդիւնք նոյն մտածութիւններու, կը հրատարակէր, կամ անոր հրատարակութիլը կ՚իմացընէր, և տարեգլխին մեր տգէտ և ըն——որեալ ազգը հոգեկան պարգև մը կ՚ընդունէր. Ո՞վ գիտէ այս Հռովմէական պարգևէ որքան բարիքներ, ի՞նչ բաներ, ի՞նչ անթիւ շահեր կը ծնանէին. Ո՞վ գիտէ այս հոգեկան պարգևը որքան հրաշքներ պիտի ընէր, որքան կոյրերու աչքեր պիտի բանար և լուսաւորէր, որքան մոլորեալ Հայեր ճշմարիտ Եկեղեցւոյն ճամբան պիտի մտցընէր. Ո՞վ գիտէ, գուցէ այս Հռովմէական պարգևը իբրև ոգետու զօրութիւն մը մեր ազգին մէջ տարածելու տեղը, որքան թմրեալ և թմբրեալ միտքեր պիտի արթնցընէր. վհատեալ սիրտերու քաջալերութիւն պիտի տար, բաժանեալ և կռուող համահայր և համամայր եղբայրները պիտի կապէր կապկըպէր . . . Ո՞վ գիտէ, գուցէ յիշեալ հազուագիւտ փիլիսոփային միտքը քիչ քիչ պարզելով և վերանալով մինչև երկինք կ՚ելլէր և փոխանակ խօսակցութեան մը կամ հոգեկան պարգևի մը, երկնային պարգև մը կը շնորհէր մեզ և մեր մէջէ

Հերետիկոսութիւնը կը փարատէր · որով մենք ալ մեր մահացու կեանքը երկրի վրայ շիտակ Ճամբուն մէջ անցընելէ ետքը կրնայինք անդին աշխարհը հաւիտենական հայերուն քով կամ ներքեւը տեղ մը , գոնէ խորշ մը ունենալ և մշտնջենաւոր հուրէն ազատիլ ։ Ահ անտանելի այցելու , որքան երջանկութենէ զմեզ զրկեցիր · գիտե՞ս որ քու յանցանքովդ , և քու յանցանքովդ միայն , բոլոր ազգ մը դժոխք պիտի երթայ · ա՜հ , պէտք չէր որ մոռնայիր թէ՝ հաւիտենական եկեղեցին դուրս փրկութիւն չկայ և մեր գլխուն այս ձունը չբերէիր · · · · · ա՜հ , անիծեա՜լ բարեկամ , եթէ այն օրը վանք չերթայիր , գուցէ Մխիթարեանք զմեզ Հռովմայ երկրաւոր և երկնաւոր գահին ազատաւոր ընէին · · · ողորմելի՜ Արարատայ որդիք , ո՞ր կողմէ բաղդունիք , որ աս կողմէ ալ քիչ մը խնդայիք · · ·

Ինչ և իցէ անցեալ բանի վրայ զուր տեղը չ'ափսոսալով , տեսնենք թէ ինչ ընելու համար յիշեալ բարեկամը Ս · Ղազարու վանքը գացեր է · տեսնենք թէ ուխտաւոր կամ բօթաբեր լուր մը իմացընելու համար կամ նոր պատահարք մը ազգ առնելու դիտողութբ մինչև հոն երթալու աշխատ եղեր է անիկա ։ Բարեկամը սենեակէն ներս կը մտնէ չմտներ , մէկէն կը տեսնէ որ Մխիթարեանը բոլորովին այլայլած և վրդովեալ կերպարանք մը ունի , և արձանի պէս կեցած՝ իր գալուն համար շնորհաւորութեան և ոչ փոքրիկ շարժում մը կ'ընէ · ընդհակառակն իր վրայ այնպէս պինդ պինդ կը նայի որ ինքն ալ կը շփոթի և կը զղջայ այցելութե գալուն · բայց որովհետև մտերիմ բարեկամ է ; արձակ համարձակ յառաջ կ'անցնի կը մտենայ և անոր երեսին վրայ չորցած արցունքի կաթիլներու նշանը տեսնելով , կը զարմանայ կը մնայ ,

— Ի՞նչ է այդ , բարեկամ , կ'ըսէ Մխիթարեանին , այդ ի՞նչ տրտմութեան մէջ ըլլալդ կը տեսնեմ այսպիսի ուրախալի ժամանակի մէջ ։

— Ուրախալի՞ ժամանակ մը , պատասխան կու տայ Մխի-

թարեանը, սրտին կսկիծը և բարկութիւնը հազիւ հազ զսպելով. ուրախալի ժամանա՞կ մը . . . . . ո՞ւր էր թէ իրաւ ըլլար ըսածդ ։

— Ի՞նչ կայ, վարդապե՛տ սիրելի, կը կրկնէ Մխիթարեանին բարեկամը, ի՞նչ նոր բօթ լսեցիր, ի՞նչ սև լուրեր ընդունեցիր. ի՞նչ նոր կրօնական դիպուած մը պատահեցաւ, պատմէ՛ ինծի, կ'աղաչեմ, պատմէ՛ . . . . միթէ քաղաք մը կործանեցա՞ւ, ազգ մը բնաջինջ եղա՞ւ, ժողովուրդ մը բողոքականութեան դարձա՞ւ, կամ իր ազատութիւնը կորսնցո՞ւց . . . . Վաթիկանի սիւները կործանեցա՞ն մի, փլատակներուն տակը ո՞վ մնաց, կ'աղաչեմ, շուտո՛վ պատմէ ինծի ։

— Ո՛չ, պարո՛ն, այս իմ սիրտիս ցաւն ալ և փիլիսոփայութիւնս որ կը փնտռես, այս ժամանակիս ճշմարտութեան վրայ է ։

— Իրաւունք ունիս, վարդապե՛տ սիրելի, այո՛, մեր ժամանակը թշուառ և դառնալից ժամանակ է, բայց յանցանքը որո՞ւ է. ինչո՞ւ համար . . . .

— Մ'ի հարցըներ, բարեկամ, կ'աղաչեմ, սա անիծեալ լրագիրները կը փնտռե՞ս . . . ահա անո՛նք են որ իմ սիրտս կը դըրդեցընեն ։

— Ի՞նչ կ'ըսես, վարդապե՛տ բարի, կը մոռնա՞ս որ Ս. Ղազարու վանքը լրագիր մը կը հրատարակէ, և ան լրագրով մեծ համբաւ ստացած է հիմա Ասիայի մէջ ։ Մինչև այսօր մէկը իրեն դէմ բան մը ըսած և գրած չունի, և գրելու կամ ըսելու իսկ իրաւունք չ'ունի, ինչու որ ամէն մարդ ազատ են, իրենք իրենց կը մտածեն, և իրենց բարի երևցածը 'ի գործ կը դնեն ։ Կարծեմ թէ [illegible] սա անբռնաբարելի իրաւունքը չ'ուրանար, կամ անոր դէմ չըլլիր. վասն զի ինքն ալ ճշմարտութեան ի՛նչ ձև ուզէ նէ, արդարութեան ի՛նչ շուք արժան դատի նէ, այնպէս կը հագուեցընէ, կը սգուեցընէ, և իր էջերուն մէջ կը հրատարակէ ։ Այնպէս ըլլալ պէտքը չէր, բայց ի՞նչ ընելու է, մարդկութիւնը՝ մերկանդամ ճշմարտութենէ սատանայէն աւելի կը վախնայ, և անկէ կը փախչի. ուստի հարկ է անոր վրան՝ նշանագրեալ մը

կամ ծածկոյթ մը դնել. միայն թէ աս ծածկոյթը կամ նշանագրեալը ծալուեալ մօլի մը չդարձընեն համեստ ճշմարտութիւնը և սուրբ արդարութիւնը ։ Ասոր ի՞նչ կ'ըսես ։

— Ա՛հ բարեկամ, լրագիր կայ լրագիր ալ կայ . . .

— Վարդապետ բարի , գուցէ քու տրտմութիւնդ քանի մը օտարազգի լրագիրներու վրայ է , որոնք յիրաւի աս օրերս չափէ դուրս համարձակութեամբ Հռովմայի աթոռին դէմ սկսան խօսիլ և պապութեան միջնաբերդը գնդակոծել անհնարին սաստկութեամբ ։ Բայց դու ձգէ մէկ դի աս վայրահաչ Անգղիացիները , յեղաշրջիկ (րէվօլիւսիօնէր) Գաղղիացիները , իմաստակ Պրուսիացիները . . . ահա քեզ արևելեան Հայ լրագիր մը , ա՛ռ , զա՛ն կարդա՛ , որ սուրբ պապութիւնը Տէր ալ-գին լուսաւորելը փորձեր ։

— Հա՛ . . հա՛ . ձեռքդ բռնածդ Հայերէն լրագիր է հա՜ . . . . . տեսա մէյ մը . . . սիրելի բարեկամ , եթէ իբրև պարզ կը բերես ինծի զայն ։ կ'ընդունիմ , ինչու որ 'ի բնէ հետաքրքիր ծնած եմ · բայց եթէ իբրև մխիթարութիւն կ'ընծայես , այն ինծի աւելորդ է . . . ա՛լ ես Արևելքէ մխիթարութիւն չեմ յուսար , չեմ սպասեր . . . . Արևելք ալ մոլորեր գացեր է . . . . Արևե՜լք . . . . որ երբեմն հաւատքի օրօրոցն էր , հիմա հերետիկոսաց բանակատեղի եղած է ։ Անտարակոյս քու ձեռքդ բռնած օրագիրն ալ հերետիկոսի մը գըրած է . . . . բարեկա՛մ . . . սիրելի՛ բարեկամ իմ . . . ա՛ռ , վերցու՛ զան աչքիս առջևէ , արդէն սիրտս տակն ու վրայ ըլլալ կ'ըսկսի . . . .

— Վարդապետ բարի , Ճշմարիտը ըսեմ , այդ խօսքերը քեզ չվայելեցուցի · հիմա ամէն մարդ փառք Աստուծոյ , կ'ըսէ , որ այսպիսի լուսաւորեալ դարու հասանք . . . քեզ լսողը կարծէ թէ տակաւին միջին դարու մէջ ենք և հաւատաքննութեան բոցավառ և մարդակեր ատեանը Հռովմայ մէջ կանգուն կը կենայ և հերետիկոսները ողջ ողջ կրակի մէջ նետել կու տայ . . . . . կ'աղաչեմ քեզ , վարդապետ բարի , ա՛ռ , կարդա՛ աս լրագիրը ,

հերեւակներս ըլլայ չհերեւակներս ըլլայ · անկէ քեզ վնաս մը չկայ դու անոր մէջի գրածին նայէ և եթէ կը փափագիս, ձեռնոց մը դիր, այնպէս ըռնէ զայն, որ մատներդ չ'արատին . . . .

— Ո՛հ բարեկամ, այսօր լրագիր կարդալէ աչքերս ուեցան, միտքս յոգնեցաւ ։ Եթէ զիս կը սիրես վերցո՛ւ սա լրագիրը մէջ տեղէ և իմ սրտիս վէրքերուն վրայ թոյն մի թափեր ։

— Քա՛ւ լիցի . . . վարդապե՛տ սիրելի . . . քա՛ւ լիցի . . . ես զքեզ տեսնելու, և ոչ սրտիդ վէրքերուն նոր կսկիծ մը տալու համար եկայ . . . . բայց ինչե՞ր կը լսեմ բերնէդ · օտար երկրի վրայ Հայերէն լրագիր մը կարդալով սիրտս հայրենեաց սիրով այնքան վառուեցաւ, և այնչափ զուարթութեամբ լեցուեցաւ, այնքան ցնծութիւն զգացի, որ կարդալը լմնցունելուս պէս, վազեցի հոս եկայ, որ զքեզ ալ իմ սրտիս ուրախակից ընեմ . . . ։ Ո՛հ վարդապետ սիրելի, այդ ինչչափ փոխուեր ես · շատ ժամանակէ 'ի վեր աշխարհային գործքերով զբաղեալ քաղաքէ քաղաք երթեւեկութիւն կ'ընէի, և չկրցայ հանդարտ ժամանակ մը ունենալ և քեզ տեսութեան գալ ։ Իմ բացակայութեանս ատենը քու այդպէս փոխուիլը ինձ մեծ տրտմութիւն կը պատճառէ · կը փափագէի իմանալ թէ արդեօք ի՛նչ անցք, ի՛նչ պատահմունք անցան որ ես չեմ գիտեր ։

Երբ Մխիթարեանը աս խօսքերը լսեց, 'իր թալկացոյն շրթունքները կամացուկ մը շարժեցան, աչքերը շիջում մը ըրին, և արհամարհութեան ժպիտ մը ծաւալեցաւ անոր շնորհալի երեսին վրայ ։ Այն ատենը, ինչպէս սովորութիւն է, ուսերը վեր վեր ընելով և ազդելի կերպիւ թեւը շարժելով, բարեկամ իմ, ըսաւ անոր, կը սխալիս, շատ կը սխալիս, եթէ իմ վրայ յեղաշրջութիւն կամ այլակերպութիւն մը կը տեսնես · ես բնաւ ամենեւին չեմ փոխուած · առաջ ինչ էի, հիմա ալ նոյնը եմ · առաջ ինչ միտքի

և գրութեան կը ծառայէի, հիմա ալ ան միտքի կը ծառայեմ և նոյն գրութեանը անմոլար կը հետևիմ. ... նաւակի մէջ նստողը և ծովուն վրայ սահող անցնողը կարծէ թէ՝ ծովեզրը, շէնքերը, ծառերը, և ան ծովեզերքի վրայ հաստատեալ բազմամեայ ժայռերը կը շարժին... չ'ըլլա՞յ որ դու ալ նաւակին մէջ նստող անձին նմանիս, և երևակայութիւնդ կամ աչքերդ խաբեն զքեզ։ Մենք և մեր սուրբ կրօնը երբէք չենք փոխուիր և նոյն ծովեզերքի ժայռերուն նման անշարժ անփոփոխ կը մնանք ամէնէն զարհուրելի փոթորիկներուն առեն... մեղք որ այսքան տարուան բարեկամ ենք և տակաւին մեր միտքերը իրար չեն ճանաչեր. ա՜հ, երբ պիտի ծագի ճշմարտութեան լոյսը մեր թշուառ ազգին վրայ. երբ պիտի փարատի ան մշուշը որ կ'արգիլէ շիտակ տեսնել և իրաւ դատել....

— Վարդապետ սիրելի, եթէ աս մշուշը տակաւին չփարատեցաւ, ցնծալի սրտիւ ազդ առնեմ քեզ թէ փարատելու վրայ է։ Ես փառք կուտամ Աստուծոյ, որ աս օրերուս հասայ. երջանիկ է իմ անձս, որ այրի Արարատին ճակատին վրայ լուսաւորութեան, եթէ ոչ արևը, գոնէ աստղը տեսաւ. երջանիկ է իմ սիրտս, որ յուսահատութիւնը, ամօթալի յուսահատութիւնը, կորսընցուց և կանաչաչէի յոյսոյ ճառագայթը ծագեցաւ անոր մէջ։ Այո, հիմա յոյս ունիմ, հիմա յոյս մեծ է որ ազգս պիտի լուսաւորուի և ճշմարիտ երջանկութեան ճամբան պիտի մտնէ. բայց երբ. — չեմ գիտեր. և շատ հարկաւոր իսկ չէ գիտնել ան ժամանակը, բաւական է որ նորանոր մթալի ամպեր և դիւաշունչ հովեր չծագին և զմեզ անհանգիստ չ'ընեն... Վարդապետ սիրելի, աս բանիս ապացոյց կրնայ ըլլալ Հայոց հիմակուան կացութիւնը և շարժումը։ «Ահա՛ անցին գացին այն ընդունայն հասարակ կեանքերը, ողբալի ժամանակները, որ մարդիկ երկար դէմ, հասարակ պաշտպանեներ ընելով, մարդկութեան իրաւունքը պահելու կ'ըլլային. դու աս հասարակէն ես, ես այն հասարակէն եմ ըսելով, երկար ծուռ կը նայէին. աղբիւր կարծելով

Մէջ ծնած ըլլալէին իրարու յանցանք կը սեպէին . . . . Հիմա ալ գին լաւերը իմացան թէ կործեալ պարբերութիւնը ալգին պայծառ-թեանը արգելք մը չըներ . . . . Հիմա ամէնքն ալ իմացան թէ ալգէ մը կործանման պատճառը հաւատքի կռիւն է . . . . հաւատք ըսածդ սրտի մօտի բան է . ամէն մարդուն սրտին մօտին ո՞վ կրնայ խառնուիլ . . . . . »

— Այդչափ խօսքերը չէ՞ս մխիթարելու համար ըսիր , գոչեց ան ժամանակ մխիթարեանը ուժգին ձայնիւ՝ իր բարեկամին խօսքը ընդմիջելով . ահ , այդ քու խօսքերդ զիս մխիթարելու տեղ աւելի սրտմնեցուցին . . . այդ քու բերնէդ ելածը միտքս հանդարտեցընելու տեղ տակն ու վրայ բրաւ ձգեց զան . այդ քու բերնէդ ելած ծանր խօսքերը իմ ցաւս հարիւրապատիկ աւելցուցին . հարիւրապատիկ կսկիծներով իմ սիրտս բեկաւ անկաւ , հարիւրապատիկ յուսահատութեամբ բերանս կապուեցաւ , հարիւրապատիկ հարուածով միտքս թաւալգլոր կործանեցաւ , երբ քու այդ խօսքերդ լսեցի . . .

— Եթէ այդպէս է , վարդապետ սիրելի , թողութիւն կ՚ուզեմ քեզմէ , ինչու որ ակամայ պատճառ եղայ զքեզ վշտացընելու և սրտիդ կսկիծները աւելի դառնացընելու . . . ուրիշ օր մը գուցէ աւելի հանդարտութեամբ հնար ըլլայ մեզ աս նիւթիս վրայ խօսիլ . հիմա իմ առաջիկայութիւնս քեզ ցաւ պատճառելէ ուրիշ բան չկրնար ընել . . . ուրեմն մնաս բարև , բարի երեկոյ . . . . . . :

— Կեցի՛ր , բարեկամ , կեցի՛ր , ես քեզ [illegible] կը [illegible] , որ թարթափիր մարդ ես . ինչու որ [illegible] [illegible] լաւերը [illegible] [illegible] մէջ ; որ թարթափիր [illegible] մարդիկ են . բայց դժբաղդաբար անոր ասոր խօսքերէ և մանաւանդ գրուածներէ կը խաբուին :

— Բայց , վարդապետ սիրելի , հոս խաբուելու բան չկայ , ըսածս բացայայտ , ակներև է :

— Կեցի՛ր , հիմա [illegible] [illegible] [illegible] կը [illegible] , և [illegible] [illegible] թէ [illegible] [illegible] չէս , ես ալ [illegible] կործեալ կը հետևիմ :

Մխիթարեանը աս ըսելէ ետև քիչ մը լուռ կեցե-

նայ, չորս դին կը նայի, մէյ մը աչքը իր գիրքերուն վրայ կը դարձընէ, և ձեռքովը իր ճակատը թեթև կերպիւ շփելով գլխուն մազերը վեր վեր կը հրէ . . . յանկարծ իր երևակայութիւնը կը բռնկի, կը վառի և շուտ շուտ ծառացեալ վեր կ'ելլէ կը մաքրի, կը պարզի և քանի մը բոպէէն անմահից կայարանը կը թռչի կը դադրի . հոնկէ առանց յոգնութիւն առնելու, հրեշտակի ձայնիւ, բարեկամ, կ'ըսէ իր մահկանացու ընկերին, Երջանկութիւնը հոգւոյն մարմնոյ հոգի՞ն է թէ մարմինը . . . . հոգին անմա՞հ է թէ ոչ . . . . : Մահկանացու բարեկամին միտքը չկրնալով մէկէն 'ի մէկ ան աստիճան բարձրութեան և պարզութեան ելնել, և միայն երկրաւոր գիտութիւններու զբաղած ըլլալով 'ի մանկութենէ հետէ, աս հարցումի վրայ քիչ մը կը զարմանայ կ'ապշի . բայց, կըցածին չափ, իր զարմացումը յայտնի չ'ըներով, պատասխան մը կու տայ անոր, աչքերը դէպ 'ի երկին վերցընելով, և կ'ըսկսի, ըսել, կրկնել և երեքկնել թէ՝ հոգին անմահ է : Սակայն իր միտքը չի կրնալով աւելի մը ըմբռնել հոգւոյ անմահութեանը և ազգի մը յառաջդիմութեանց մէջ եղած կապակցութիւնը, կ'ըսկսի քիչ մը արտմիլ և անոյշ անոյշ գանգատ մը ընել Մխիթարեանին վարդապետ բարի, կ'ըսէ անոր հեզ ձայնիւ մը, Ճշմարիտ, աղէկ չհասկըցայ քու հարցումիդ իմաստը . ես քրիստոնեայ եմ. դու զայն լաւ գիտես և կը հաստատես իսկ, արդ չկայ քրիստոնեայ մը, որ վայրկեան մը երկբայի հոգւոյ անմահութեանը վրայ . եթէ դու իմ վրաս կասկած մը ունիս կամ մոլորութեան բիծ մը կը տեսնես, բաց կ'աղաչեմ, ինծմէ մի պահեր . ինչու որ այդ քու հարցումդ ինծ շատ պատիւ չ'ըներ, և քիչ մըն ալ ջերմեռանդութեանս կը դպչի : Բայց ատ թող մէկ դի մնայ . մեր ազգին յառաջդիմութեանը վրայ խօսելու ատենը ինչ հարկ է արդեօք հոգւոյ անմահութեանը վրայ զրուցել, ինչ հարկ է, անկեղծութեամբ կը հարցընեմ քեզ, մեր աշխարհը ձգել և անդին աշխարհը

քշնել. ի՞նչ հարկ է յառաջդիմական երջանկութիւնը մէջ բերել, երբ մեր երկրագունդի վրայ շատ մարդիկ սովամահ կ'այրին կը լափին, և ասոնցմէ ոմանք զգալի արևը երբէք չտեսած, իրենց թշուառ արևը կը կորսնցընեն։ Ի՞նչ հարկ է հոգիին անմահութիւնը հաստատել, (որն որ հաստատելու կարօտութիւն չունի) երբ մեր ժամանակը, մեր օրերը, մեր աչքին առջևը անգամ շատ ժողովուրդներ, շատ ազգեր մահուչափ վիրաւորեալ կ'իյնան և իրենց անմահ օրէնքներուն շուքիդը արդէն արեան մէջ կորսուած է։

— Այդ ի՞նչ է, բարեկամ, կ'ըսէ ան առենը Մխիթարեանը չափէ դուրս ապշեալ. այդ ի՞նչ է. ինչե՞ր կը լսեմ. ինչե՞ր կ'ելլեն բերնէդ . . . . դո՛ւն ալ մեր անհատապ և ամբարիշտ դարին թթու և ունայն կարծիքները առեր քեզ սեպհականեր ես։ Միթէ մօտերս Գաղղիայ ճամբորդութիւն ըրի՞ր։ Աստուածն Բրուտոսեան գաղափարներու հոտ մը կը բուրէ վրայէդ։ Գիտցած ըլլաս, սիրելի, որ մարդս ամէն բանէ առաջ, հոգւոյն յառաջդիմական երջանկութեան պաշարը մը ճարել կ'ըստիպուի, գիտցած ըլլաս որ յառաջդիմական երջանկութիւնը, ձեռք ձգգելու համար պիտի ըլլան բոլոր մեր ճիգը, հոգը և մտմտուքը։ Եւ որովհետև ազգ մը մարդիկներու ընկերութենէ կը գոյանայ, յայտնի և մէկին է թէ ազգն ալ հոգի մը ունի և ամէն բանէ առաջ անոր յառաջդիմական երջանկութեան համար ալ պաշարը մը համբարելու հոգ տածելու է. և յետոյ, կը լսե՞ս, բարեկամ. կը լսե՞ս, և յետոյ միայն անոր հաղեղէն օրէնքները և կրաւունքները, երկրաւոր երջանկութիւնը, աշխարհային ասպիճանը և պատիւը կարգի դնելու է. ապա թէ ոչ ի՞նչ օգուտ է ազգի մը. ի՞նչ օգուտ է մեր ազգին, ասա լուսաւորեալ և անդ մթագգած լալ ու երերալ։ Գիտցած ըլլաս, սիրելի՛, այն ազգը միայն կ'ըսուի լուսաւորեալ, որ պայս ճշմարտութիւնը ճանչցեր է, և ան առենը միայն՝ այն ազգին համար իր դարն ալ կրնայ ըսուիլ լուսաւորեալ դար։ Այդ ի՞նչ կ'ըսես։ Գիտցած ըլլաս որ լուսաւորեալ

ազգ մը, այսինքն՝ այն որ ճշմարիտ երջանկութեան ճամբան մտեր է, ստիպեալ է, եթէ չուզեր, իր լուսաւորութիւնը կորսնցընել և մութի մէջ թափառիլ, ստիպեալ է, կ՚ըսեմ, գլխաւոր սկզբունքի մը անփոփոխ օրէնքի մը վրայ հաստատել իր վիճակը. ան ալ՝ ոչ ինքնիրեն ազատութեամբ, այլ սովորութեան մը ձեռօք։ Ասոր ալ ի՞նչ կ՚ըսես։

— Վարդապետ բարի, բառդ աղէկ մը չհասկցայ. ճշմարիտ երջանկութեան, գլխաւոր սկզբունք, անփոփոխ օրէնք, սովորութեան ըսելով ի՞նչ կ՚իմանաս. աս բառերը ինձ շատ լուսաւոր բառեր չեն երևիր։

— Բարեկամ, այդ բառերը խրթին յայտնի են, բայց որովհետև քեզ դիւրին չէ զանոնք հասկընալ, հարկ ինձ կը համարիմ անոնց մեկնութիւնը տալ. սակայն առաջ քեզ ուրիշ հարցում մը ընեմ. լուսաւորութիւն ազգի ըսելով ի՞նչ կ՚իմանաս։

Սա հարցումին վրայ, բարեկամը աւելի ևս զարմանալով, և գուցէ ևս շփոթելով պահ մը լուռ կեցաւ, և գետինը նայիլ սկսաւ։ Յետոյ, հազիւ հազ միտքը բերելով բիւրաւոր անգամ գրուած և տպուած առակին օրինակը և նմանութիւնը աս ձև պատասխանեց։

Ինչպէս որ մարմնոյն աչքը լուսաւորող արևն է, այնպէս ալ հոգւոյն աչքը, այսինքն միտքը լուսաւորողն է ճշմարտութիւնը։ Ինչպէս որ արևը նիւթաւոր աշխարհս կը լուսաւորէ, այնպէս ալ ճշմարտութիւնը բանաւոր աշխարհը կը լուսաւորէ, անոր համար լուսաւորեալ կը կոչուի մէկ ազգ մը, երբ ճշմարտութեան լոյսը ամենայն հոգւոյն մէջ կը ծագի, որով ամէն բան շիտակ կը փնտռեն, և ամէն բանի մէջ ճշմարտութեան կը հետևին։ (Ասոր ի՞նչ կ՚ըսես, Լուսաւորչեան Հայ)։

— Շա՛տ լաւ պատասխանեցիր. հիմա քեզի նորէն կը հարցընեմ. այս քու ըսած լուսաւորութիւնը մեր ազգին վրայ ի՞նչ աստիճանի ծագած կը գտնուի։

Խեղճ բարեկամը այցելութիւն ընելու միտքով հոն գնաց, և հիմա նորուս աշակերտի մը պէս ծայր ու ծագ չունեցող բաներու պատասխան տալ կ՚ըստիպուէր։

անոր համար սիրտը կը նեղանայ, քիչ մըն ալ գլուխը կը տաքնայ, և կ՚ուզէ ելլել երթալ. բայց խմաստութեամբ դարձեալ ինքզինքը կը բռնէ, ակռաները կը սեղմէ, և սա չնչին առթիւ հինօրեայ բարեկամութեան թելը չկտրելու համար, որն որ ան վայրկենի մէջ շղթայէ մը ծանր կ՚երևէր իրեն. կ՚ընդունի համբերել. և ձիկ չհանել: Նոյնական ժամանակ այսպէս լուռմուռ կենալէ ետև. Արգապէտ սիրելի, կ՚ըսէ Մխիթարեանին, կը ցաւիմ որ հնար չէ ինձ ձեզի քու հարցումիդ պատասխան մը տալ. վասն զի լուսաչափ մը (չեմ գիտեր եթէ այսպիսի գործի մը հնարուած է թէ չէ լուսաւորեալ Եւրոպայի մէջ) լուսաչափ մը կ՚ըսեմ, հետս չունիմ որ մեր ազգին լուսաւորութեան աստիճանը չափեմ: Ինձ այնպէս կ՚երևի թէ քիչէ շատ անիկա կը լուսաւորուի և ձեռքէն եկածը կընէ, կ՚աշխատի որ իր գլուխը բոլորովին մշուշին մէջէն դուրս հանէ: Տե՛ս ինչ շէն տեղեր մէջ հանդէսներ, որքա՜ն բանագէտներ, գիրքեր կը տպուին. դպրոցները երթալով կը շատնան... Նմա Եւրոպացւոց պէս աշխարհիկ ճարտիկներ գրականութեան հետ ԸՆՆԸ սկսան, որն որ ազգին մէջ նոր և անսեն երևոյթ մը կրնայ համարուիլ: Տես.....

— Ներէք է, բարեկամ, ներէք է, ըսաւ ան առենը Մխիթարեանը, անհամբերութեամբ անոր խօսքը ընդմիջելով, ներէք է, ես գիտեմ և կը մարգարէանամ քու միւս ըսելիքներդ.... եթէ դու այդ ամենը լուսաւորութեան կայծերու կամ ճառագայթներու տեղ կը դնես, գիտցած ըլլաս որ իմ աչքերուս համար (ինչ որպէս աչքեր) այդ ամենը դէպ ՚ի մութ գիշեր մը առաջնորդող վերջալոյսի նշան է....... ա՛հ, այնպիսի գիշեր մը որուն մութը մշտնջենաւոր է և մինչև անգիր աշխարհը մերազգի եղբայրներուն վըրայէ չպիտի հեռանայ: Գիտցած ըլլաս, սիրելի՛ բարեկամ, թէ այդ ամենը, այդ յառաջադիմութիւնը, թէ այդ դպրոցներէն իրեն անփոփոխ օրէնքի մը վրայ հաստատած

ըլլան , օգտակար ըլլալու տեղ վնասներու պատճառ կ՚ըլլան · գիտցած ըլլաս որ հիմա ազգին մէջ գրիչ խաղցընող անձինք , ո՛չ ճշմարտութիւնը լաւ գիտեն և ոչ ալ դրական արդիւնք մը կը փնտրեն · ուստի անոնց աներկիւղ դիւրին դիւրին միտքը պղտորելու պատճառ կ՚ըլլան , ինչու որ ո՛չ ժողովուրդին և ո՛չ եկեղեցւոյն օրէնքները գիտեն : Գիտցած ըլլաս որ ազգի մը քաղաքակրթութեան հիմը եկեղեցական քաղաքակրթութիւնը պէտք է որ ըլլայ : Գիտցած ըլլաս որ աշխարհականները գիրք շարադրելու հետ ըլլալը , և ա՛լ եկեղեցականաց կարօտ չ՚ըլլալը , վնասակար , խիստ վնասակար է :

Դուն ի՞նչ կ՚ըսես . . . . ի՞նչ առարկելու կը մտածես . . . . . .

Սիրելի բարեկամը սա խօսքերուն վրայ հիմնովին շփոթեցաւ , պատասխան մը չկրցաւ կամ չհամարձակեցաւ տալ : Ասոր համար Մխիթարեանը ևս առաւել քաջալերեալ իր երևակայութեան սանձը մէկդի կը ձգէ , և արտաքոյ կարգի ճամարտակութեամբ այսպէս կը շարունակէ իր խօսքը : . . . . . .

Գիտնաս, բարեկամ, կ՚ըսէ բարձր ձայնիւ , գիտնաս որ ազգային քաղաքակրթութեան բուն հիմն երեք սիւն ունի · առաջինն է քաղաքակրթութեան ճշմարիտ և յաւիտենական , և երկրորդն է քաղաքակրթութեան ժողովրդական . . . . . . . . յաւիտենական երջանկութեան քաղաքակրթութիւնը առանց ժողովրդական քաղաքակրթութեան երկար չի տևեր , և ժողովրդական քաղաքակրթութիւնն ալ , առանց ճշմարիտ քաղաքակրթութեան բանի չի գար . . . . . գիտնաս որ հիմակուան ժողովրդական Եւրոպիոյ քաղաքակրթութեան հիմը դրուած է հաւատոյ վրայ · գիտնաս որ Եւրոպիոյ հիմակուան քաղաքակրթութիւնը և ծաղկիլը եկեղեցականներէ սկսեր է . . . . . գիտնաս որ . . .

Չենք ուզեր աւելի ձանձրութիւն պատճառել մեր ընթերցողաց , և Մխիթարեանին անհիմն և անհամ խօսքերը յառաջ բերել · բայց որովհետև աս երկու բարեկամներուն խօսակցութիւնը սրտաշարժ կերպիւ մը կը վերջանայ , ան հատուածը միայն յիշել արժան կը համարինք .

Մխիթարեանը իր խօսքին մէջ այնքան վարդապետութիւն , այնքան հնարագիտութիւն կը բանեցընէ , այնքան

Կ'ուրէ կը բուրէ [illegible], մինչդեռ կը ճմլէ կը ճզմէ [illegible], որ ջնջան մը ըներով, անով իր բարեկամին միտքը և բերանը կը կապէ և կը կաշկանդէ ։ Ասիկա անոր Թրթրակ լեզուանութենէ չարժեալ և ուսուցման փառուորէ քայքայեալ, դարձի կու գայ, կը զղջայ և կ'ըսկսի ինքն ալ Մխիթարեանին պէս պոռալ թէ' [illegible] և [illegible] տակաւին Հայոց ազգին վրայ չէ ծագած, և հետեւաբար թէ' Հայերը յաւիտենական թշուառութեան մութին մէջն են ։ Այդէն յայտնի է թէ Հայերը [illegible] էն ։ ուստի աս յաւիտենական թշուառութեան մութին մէջ կենալը բնական և շատ բնական կատարած մի է ։

Նա հասարակ նոր դարձի եկող անձինք մոլեռանդ և կրակոտ կ'ըլլան, և ամէն փանքի մէջ կը նետուին, որ իրենց [illegible] յաղթէ և տիրէ ։ Ասա անոր համար է որ Մխիթարեանին բարեկամը, պոռալը պոռչտալը բաւական չսեպելով, կ'ըսկսի աղաչել զանիկա որ իր դարձը ընտիր կերպիւ մը գրէ և սուտ կամ ճարտարբանութեան ծաղիկներով զարդարէ, Լուսավորչ-ային էջերուն մէջ հրատարակէ, [illegible] :

— Բարեկամ, կ'ըսէ ան առենը Մխիթարեանը, [illegible] ։

— Ի՞նչ ըսել է, վարդապետ իմ, ատոր վրայ երկբայելու չէ ․ [illegible] .... ո՞վ գիտէ աս խոստովանութիւններնիս ո՛րչափ ինծի [illegible] ․ ո՞վ գիտէ ո՛րչափ մարդիկ ինծի պէս դարձի պիտի գան, աւելի մը իմանալով թէ' ինչ ըսել է [illegible] ։

— Կը կարծես ։

— Սայց եմ ․ հաւատա՛ ըսածիս և վերջը բարի է ․ եթէ ես դարձի եկայ ան յիշեալ [illegible] շատերը դարձի կու գան անոր վրայ մի՛ տարակուսիր ․․․

Բարեկամը՝ սրտին չափէ դուրս ուրախութեանը համար․ իր բերնի խօսքը չկրնար լմնցունել, ուստի սիրով մը տեղէն կ՚ելլէ, Մխիթարեանին կը մօտենայ և անոր ձեռքը կը համբուրէ ու շնորհակալ կ՚ըլլայ։ Այն վայրկենին մէջ երկու բարեկամներու երեսները անպատմելի յուսով կը նկարագրուէին, ցնծութեան ձայնագայն մը անոնց աչքերուն մէջ կը փայլի․ երկուքն ալ ոտքի կ՚ելլեն, բոցավառ սիրով իրարու կը նային, մէկզմէկ կը գրկեն, կը համբուրեն․ բարեկամը դարձեալ շնորհակալ կ՚ըլլայ որ Ճշմարի՜տ ը———ր—թե—մբ լուսաւորեցաւ, Մխիթարեանն ալ կը ցնծայ որ դարձ մը ըրաւ։ Այս սիրուն ու հաղուագիւտ տեսարանը բաւական ժամանակ կը տեւէ, երկուքն ալ իրար նայելէ չեն կշտանար, երկուքն ալ իրարմէ բաժնուիլ չեն կարող․ վերջապէս աշխարհական բարեկամն չկրնալով գիշերը վանքին մէջ անցընել կ՚ըստիպուի փեղկը ձեռքը առնել և քայլ մը դէպ ՚ի դուռը նետել։ Մխիթարեանը զայն տեսնելով արտորանօք կը վազէ դուռը կը բանայ, ճրագը ձեռքը կ՚առնէ անով ու կը ը———ր՝ իր լուսաւորուած բարեկամը և մէկտեղ խօսելով կատակելով մինչեւ ծովին քովը իրարու կ՚ընկերանան։ Հոն ալ հարկ կ՚ըլլայ բաժնուիլ․ Մէկ սիրտ և մի հոգի բարեկամներէն մէկը նաւակը կը մտնէ և կը հեռանայ․ միւսը մատուռը կը մտնէ աղօթքի կը կայնի։

Սիրելի՛ ընթերցող, ———ր ի՞նչ է՞ն»։

——•——

Դանք հիմա աս երկու բարեկամներուն բուն խակ խօսակցութը, և անաչառապէս քննենք անոր մէջի եղած ծուռ ու մուռ կարծիքները։ Բողոքական հրատարակիչ կրօնաւորները, որ միշտ հեռացեալ գործին իրենց ծեռքը առած, ինչպէս որ առաջուէս մը դէպ ՚ի երկինք, այնպէս ալ անոնք անդադար մեր վրայ կը նային, և

մեր բոլոր շարժումը կը դիտեն · քանի մը ամիսէ 'ի վեր այնպիսի երեւոյթ մը տեսեր են մեր վրայ , որ բոլոր վանքը ահ ու դողի մէջ ինկեր է ։ Բողոքական կրօնաւոր հրատարակիչները դէշ և բօթաբեր նշան մը կը համարին այս երեւոյթը , և երեք ամիսէ 'ի վեր անդուռն բերնով կը պոռան կը կանչեն , զմեզ զգուշացնելու կ'աշխատին , և այսպիսի ծանր պարագայի մէջ մեր անհոգութիւնը , կամ լաւ եւս ըսենք , մեր ծիծաղելի անտարբերութիւնը անոնց սիրտը դառնութեամբ կը լեցնէ ։

Բողոքականին ըրածին դէմ գանգատ մը չունինք · բնութիւնը և մարդկութիւնը զննելը՝ գիտուններուն առաջին և ամէնէն սիրելի զբաղմունքն է ։ Օտարազգիները անգամ , ո՛ւր մնաց Մխիթարեանք , մեզ քննելու , մեր ընթացքը հետազօտ աչօք դիտելու իրաւունք ունին ։ Ազատ են իրենց միտքին մէջ շիտակ կամ ծուռ զմեզ դատել , և մեզ անիրաւ կամ իրաւ կերպիւ քար մը նետել ։ Բայց երբեք մոռնալու չէ՝ թէ իրաւունքը երկկողմանի է (ըէսիբրօք) · երբեք մոռնալու չէ որ՝ թէ՛ ազատ և թէ հպատակ մարդ մը կամ ազգ մը ամէն բանէ առաջ մարդկութեան քաղաքացի է և մարդկութեան օրինաց առջեւը ամէն քաղաքացիք հաւասար են ։ Մեր համար մեր վրայ խօսք մը ըսելէ կամ քար մը նետելէ ետքը , մէկը չկրնար զմեզ 'ի լռութիւն հրաւիրել , և անարժանութեամբ , ինչպէս կ'ընեն Մխիթարեանք , բոլոր ազգը մեր դէմը գրգռել որ պաշտօնաթերթեան կարգ կանոն դնէ , այսինքն մեր գրիչը փշրէ , ձեռքերնիս կապէ , և բերաննիս կղպէ ։ Մենք կրօնաւոր չենք · չենք ուզեր , և երբեք ուզելու չենք ուրիշ մը հրամանաւ մեր գրածը տալ , ինչպէս որ Մխիթարեանք սովորութիւն ունին և պարտաւորեալ են ընելու ։ Եթէ մէկը մեր գրածին չհաւնի , թող չկարդայ · ասկէ զատ պատիժ մը՝ ո՛չ մարդ , ո՛չ ազգ և ո՛չ մարդկութիւնը կրնան մեզ տալ · ինչու որ մենք տէրութեան օրէնքները աչքերնուս առջեւը առած և ա-

նոնց սիրով հնազանդելով կը գրեմք ։

Մխիթարեանք, եթէ կ՚ուզէք որ լռեմք, մտոնութիւնը մէկդի ձգեցէք և նախ դուք լռեցէք․ ապա թէ ոչ, եթէ դուք մէկ խօսիք, մենք երկու խօսելու պատրաստ ենք, և չկայ պատիժ մը, չկայ արգելք մը որ զմեզ մեր պարտքը կատարելէ հրաժարցընէ ։

Այս գիտցած և աղէկ գիտցած ըլլաք ։

Բայց ինչ է ան երևոյթը, զոր Բազմավէպին աշխատող հրատարակիչները տեսեր են մեր ազգին վրայ, և ինչու համար տեսնելէն ետքը այնպէս լեղապատառ եղեր են ։ Բնական գիտութեանց փիլիսոփայութիւնը կը սորվեցընէ՝ թէ ամէն մարմին թէ՛ երկրաւոր և թէ երկնային ծիր կամ շրջան մը ունի և անկէ չզարտուղիր․ կ՚երևի թէ Հայերը կամ Հայոց ազգը քալելու և միւս ազգերուն պէս իր պարտքերը կատարելու ատենը, իր շրջանէն խոտորեր է, ոտքը ճամբէն քիչ մը դուրս հաներ է, և հիմա իր բնական շրջանը ձգելով այնպիսի ճամբայ մը մտեր է, որ Եւրոպա ճամբայ չէ ։ Կ՚երևի նաև թէ աս մոլար ճամբային մէջ այնչափ յառաջ գացեր է, որ Մէկ խելքմ-ընէ Մէկալ խելքմ-ընան անդո-նդը Գըլըխը-Կէսք է ։

Բազմավէպը աս ցաւալի, բայց քիչ մը ալ երկբայելի լուրը տալէ ետքը, կ՚ըսկսի լալով ու ողբալով կշտամբել զՀայերը, որ իրենց ազգը առանց ճշմարիտ ընտա-րո-բեան ջահի մը, առանց սորվեցընողի և առաջնորդի մը, ձգեր և անհոգ անտարբեր կեցեր կը նային ։ Բայց որովհետև ճշմարիտ և ջերմեռանդ հայրենասէր է, կշտամբանքը բաւական չսեպելով՝ նա մանաւանդ տեսնելով թէ Հայերը անով աւելի անտարբերութեան կը զարնեն․ քանի մը րոպէ սրտին ցաւը կը զսպէ, աչքերուն արցունքները կը սրբէ, և կ՚ըսկսի Հայերը մահածու վտանգէն ազատելու համար, արտորանօք մէկ քանի ազդու միջոցներ ցուցընել, գրել, տպել և Արևելք առաքել որ սա ողջ մելի Հայոց ազգը մոլորութեան ճամբուն մէջ զոհ չըլլայ ։

Հիմա կը լսենք թէ․ Բազմավէպին կամակից և գրեթէ

հաւատակից հայազգիները սրտէն ամենայն սիրով և փութով ան միջոցները 'ի գործ դնել կ'աշխատին, և տարակոյս չկայ որ ազգիս փրկութիւնը յաջողութեամբ պիտի կատարուի . . . . . . :

Բողոքականը աս տեսնելով, քիչ մը կը հանդարտի շունչ կ'առնէ և իր հրատարակիչներուն սիրտերը երթալով երթալով այնպէս կը տկարանայ, որ կ'ըսկսին, ինչպէս որ ճշմարիտ փիլիսոփայներու կը վայլէ, իրենք զիրենք մեծամեծ խնդիրներու մէջ ձգել, մէկ մէկու հարցընել թէ ի՞նչ է Հայոց այսպէս մոլորելուն բունն և էական պատճառը, թէ ի՞նչպէս եղեր է որ Հայերը չ'ելլու ճամբայ մտեր են, և թէ՝ աս հասարակ նոր քալելու սկսող ազգի մը ի՞նչ բան հարկաւոր է որ լուսաւորուելու ատենը Հայոց պէս չմոլորի և անվտանգ լուսաւորութեան նաւահանգիստը հասնի:

Բողոքականին գրածին նայելով, մարդ մը կամ ազգ մը լուսաւորուելու համար պէտք է որ նախ գիտնայ թէ անմահ հոգի մը ունի և ամէն բանէ առաջ իր հոգալու բանն է անոր յաւիտենական երջանկութիւնը. ինչու որ հոգին անմահ ըլլալով, եթէ անոր լուսաւորութիւնը զանց առնէ, միայն մարմնաւոր աչքերը բացուին և անցաւոր ու երկրաւոր երջանկութեան ետևէ ըլլայ, 'ի վերջոյ յաւիտենական թշուառութեան մէջ պիտի չարչըրուի. Ուստի անհնարին վտանգ մը կայ, եթէ մարդ մը կամ ազգ մը ոտքի ելլելէ ետքը՝ իր առջի քայլը ճշմարիտ երջանկութեան ճամբուն մէջ չնետեր և ճշմարտութեան լոյսին ետևէ քայլ առ քայլ չ'երթար. Արդ Բողոքականին փիլիսոփայութեան և գրութեանը նայելով, հոգւոյ յաւիտենական երջանկութիւնը, կրօնը միայն կրնայ տալ. Ուստի ամէն բանէ առաջ պէտք է որ ան մարդը կամ ազգը հոգին փրկէ, այսինքն կրօն մը ընդունի, կամ Բողոքականին բառը գործածելով ըսենք, անխախտ օրէնքի մը հաւատայ: Բայց ո՞ր կրօնը արդեօք յաւիտենական երջանկութեան և ճշմարիտ երջանկութեան ճամբուն մէջ անմոլար և ապահով կերպիւ կրնայ առաջնորդել մարդու կամ ազգի մը.

Բողոքականը վարդապետները և հետևորդները, բանեցընե-լով ասոր վրայ բան մը չըսեր․ բայց յայտնի է թէ այս լռութեամբը անտարբերութիւն չը քարոզեր, կամ աւելի ճշմարիտ ըսենք, այս լռութեամբը ամէն կրօն հաւասար են ըսել չ'ուզեր․ ինչու որ ան ատենը ըս- ճշմարիտ երջանկութեան և հոգւոյ փրկութե ճամբան բազմածին կ'ըլլայ, և յաւիտենական երջանկութեան ճամբան մոլորելու համար Հռոմէն անցնիլ բնաւ ամենևին հարկ չըլլար։ Սակայն եթէ աղէկ կը յիշենք, Բողոքականը տեղ մը գը-րած է թէ․ "Ճշմարտութիւնը մի է և ծռութիւնը անթիւ"։ Որդ եթէ ամէն կրօն կրնայ, յաւիտենական երջանկութեան, ճշմարիտ երջանկութեան, և յաւիտենական երջանկութեան առաջնորդութիւն մը տալ, ամէն կրօն ուղիղ են։

Բողոքականը ասոր ի՞նչ կ'ըսէ։

Եթէ ամէն կրօն ուղիղ են, յայտնի է թէ ճշմարտութիւնն է անթիւ և ծռութիւնն է մի։ Այս հետևութիւը Բողոքականին կրօնական համոզմանցը ուղղակի դէմ ըլլա-լով, կարելի չէ որ ընդունի զան․ անոր համար ստի-պեալ ենք ուրիշ հետևութիւն մը հանել անկէ, և ըսել թէ՝ հոգւոյ ճշմարիտ և յաւիտենական երջանկութեան առաջնորդը Հռոմէական կրօնն է։ Բողոքականը ասոր ի՞նչ կ'ըսէ։

Եթէ Հռոմէական կրօնը յաւիտենական երջանկութեան և ճշմարիտ երջանկութեան տանող կրօնն է, և եթէ մարդ մը կամ ազգ մը, որ կ'ուզէ լուսաւորիլ, ասկէ ետքն ալ այս երջանկութիւնը ձեռք ձգել աշխատելու է, հարկ է թէ ան մարդը կամ ազգը մարմնոյ աչքը տակաւին չբացած հոգւոյ աչքը բանայ, և ան լուսաւորեալ կրօնը ընդունի․ ապա թէ ոչ՝ կոյր մնալով աջ և ահեա-կը չպիտի կրնայ զանազանել, և ուրքին առջևը որ ճամ-բան որ հանդիպի, հոն պիտի մնայ անկասկած և ան թշուառ Հայազգիներուն պէս, չ'ելլելու ճամբու մէջ պիտի լինի․ և պատէ 'ի պատ զարնուելով ու չարչար-ուելով յաւիտեան պիտի կորսուի։

Բողոքականը ասոր բան մը չկրնար ըսելու․ ինչու որ նախ՝ յաւիտենական երջանկութեան առաջնորդութիւնը, ճշմարտու-

Բեան յատուկ կ'ըլլայ · Ճշմարտութեան լոյսը անփոփոխ օրէնքէ կը բղխի · անփոփոխ օրէնքը Հաւատոյ միաբանութիւններու մէջ անխախտ կրօն բռնել է · անխախտ կրօնը է Հռոմէականը, որուն համար Բողոքականքը զինեալ և սպառազինեալ մինչև 'ի մահ կը կռուի, և ամէն վտանգը կ'արհամարհէ ։ Երկրորդ անգամ, Եւրոպիոյ քաղաքակրթութեան հիմը դրուած է հաստատ վրայ, և Եւրոպիոյ քաղաքակրթութիւնը և ծաղկումը, որ հիմա կը փայլին, եկեղեցականներէն եկած է ։ Անտարակոյս այս հաւատքը և այս եկեղեցականները Հռոմէական են ։ Իսկ արդ քաղաքակրթութիւն մը, առանց յառաջդիմական երջանկութեան քաղաքակրթութեանը, ուրեմն, հարկաւ, Եւրոպայի միայն մէկ մասը և ոչ ամէնը լուսաւորեալ է · ուրեմն Եւրոպայի այն մասը, որ Հռոմէական կրօնը չ'ընդունիր · լուսաւորեալ չէ · ուրեմն Անգղիա, Ռուսիա, և այլն և այլն, որ Հռոմի դէմ ապստամբեալ թշնամի են, յաւիտենական երջանկութենէ զրկեալ են, ուրեմն անփոփոխ օրէնքի մը չեն հնազանդիր, ուրեմն մոլորեալ են · միով բանիւ ըսենք, լուսաւորեալ չեն ։ Մենք ալ ողորմելի Հայերուն պէս չեղեր ճամբայի մը մէջ ենք · ուրեմն անոնց հոգին ալ վտանգի մէջ է, պիտի կորսուի, յաւիտեան պիտի կորսուի . . . գուցէ արդէն յաւիտեան կորսուեցաւ ։ . . . . . . .

Արդ ի՞նչ կ'ըսես, հերետիկոս ընթերցող ։

Դարձեալ Բողոքականքն անհիմ և անյարիր բանծինանայելով, ոչ միայն հերետիկոս ազգերը (Անգղիացի, Ամերիկացի, Ռուսիացի, Յոյն, Հայ, և այլն) ճշմարիտ երջանկութենէ և հետևաբար լուսաւորութենէ զրկեալ են, այլ և քրիստոնեայ չեղող ազգեր (զոր օրինակ Հրեայ, Տաճիկ և այլն), և մանաւանդ անոնք որ բոլորովին ճշմարիտ երջանկութենէ զրկեալ են, և միշտ զրկեալ պիտի մնան, եթէ բռնվութեամբ, ինչպէս որ հաւանական է, յամառեալ իրենց կրօնը փոխել չեն ուզեր ։ Ուրեմն բնաւ ամենևին լուսաւորութիւնը կամ անոր թերաստուերը, կամ գոնէ անոր ստուերը վրանին չպիտի

ծագի · եւ երբեք կարող չպիտի ըլլան ուրիշ ազգերուն հետ ընթացակից եւ հաւասար ըլլալ: Բայց Բողոքականը հազար տեղ, հազար անգամ ասոր հակառակը ըսեր է · հազար անգամ գրեր եւ իր սրտին ցնծութիւը յայտներ է, թէ Տաճկի մեծազօր ազգը օրէ օր շատ զգալի կերպիւ կը յառաջանայ եւ կը լուսաւորի: Ուրեմն Մխիթարեանը շողոքորթութիւն ընելու համար կը գրէ եղեր:

Դուն ի՞նչ կ՚ըսես, բարեմիտ ընթերցող:

Բողոքականը ճշմարիտ եւ յառաջդիմական (այսինքն կրօնական) ազատութիւնը ՚ի դատ, ուրիշ լուսաւորութիւն մ՚ ալ կ՚աւելցնէ իր էջերուն մէջ, որ է ժողովրդական ազատութիւնը: Ասկէ յայտնի կ՚իմացուի՝ թէ լուսաւորութիւն ըսած բանը երկճղի է · եւ որովհետեւ, անոր կարծեաց նայելով, աս երկու ճիւղերը մէկ մէկէ զատ, կամ թէ ըսենք, մէկը առանց միւսին չկրնար ապրիլ եւ զօրանալ, յայտնի է նաեւ՝ թէ աս երկու ճիւղերուն արմատը նոյնն է: Բայց քիչ մը առաջ Բողոքականը գրեր էր՝ թէ Եւրոպայի ազատութիւնը, որ հիմա կը տեսնենք, հաւատոյ վրայ հաստատուած է · ուրեմն ան միակ արմատն է հաւատքը: Սա հաւատը հռոմէական ըլլալը ցուցընենք, Ուրեմն լուսաւորութիւնը երկուքի բաժնելը՝ այսինքն կրօնական եւ քաղաքական լուսաւորութեան, հիմ չունի եւ ապացոյց չկրնար ընդունիլ:

Այսպիսի հակասութեան մը ի՞նչ կ՚ըսես, փիլիսոփայ ընթերցող:

Եթէ Բողոքականին ըսածը իրաւ է, այսինքն եթէ ստուգիւ Եւրոպայի հիմնական ազատութիւնը հաւատոյ վրայ հաստատուած է, անտարակոյս Եւրոպայի ամենէն քաղաքակրթեալ եւ լուսաւոր քաղաքը Հռոմ պիտի ըլլայ, ուսկէ կը բղխի (ասոր ապացոյց պէտք չէ) ճշմարտութեան անարատ աղբիւրը · ուսկէ կը ծաւալի դէպ ՚ի միւս աշխարհը եւ յառաջդիմական երջանկութեան առաջնորդող անաղօտ լոյսը, ուսկէ կ՚ելլէ ան աստուածային բարբառը՝ որ ամէն մարդու սիրտը յուսով կը լեցնէ:

որ ամէն մարդու հոգին ոսկիի պէս կը զտէ կը մաքրէ ։

. . . . . . որ . . . . . . .

Եթէ Քահանայապետին ըսածը իրաւ է, պապին գահը ոչ միայն սրբութեան գահ է, այլ և ճշմարտութեան · ոչ միայն Ս. Պետրոսի՝ այլ և ամբիծ և պայծառ քաղաքակրթութեան աթոռն է ։ Հռոմ է կեդրոն ամենայն երկրային ճշմարտութեանց · ինչպէս սուրբն (ասոր ալ ապացոյց պէտք չէ) կեդրոն է բոլոր երկնային ճշմարտութեանց ։ Հռոմի դուռն է, դուռն գիտութեանց · ինչպէս ճշմարտիւ դուռն է յաւիտենական կենաց ։ Հռոմի մէջ է ազատութեան դաշտը, մարդկութեան դրօշակը, արդարութեան սուրբ կշիռը ։ Հռոմի մէջ են փիլիսոփայութեան, շղթայազերծ փիլիսոփայութեան ճեմելիքը, անոր ճշմարտութեան բաղնիքը ։ Հռոմի մէջ է մարդկային մտաց տաճարը, ինչպէս հոն է նաև անխախտ օրէնքի տաճարն ալ ։ Հռոմի մէջ է բոլոր Եւրոպա . . . . Հռոմն փոքր աշխարհ մի է, և անկէ դուրս ոչ երկրային և ոչ երկնային ճշմարտութիւն մը կայ . . . . . .

Ասոր ալ ինչ կ՚ըսես, հերետիկոս ընթերցող ։

Բայց եկուր նայէ որ դժբաղդաբար հերետիկոսներուն աչքը այնքան շլացեր աւրուեր է, որ ինչ գործի նայելու ըլլան Հռոմի մէջ, հրանօթներէ, հրացաններէ · թնդանօթներէ, զինուորներէ, սև ու մարդիկներէ ուրիշ քիչ բան կամ բան մը չեն տեսներ · անոր համար ցաւակցութեան քան թէ թշնամանաց արժանի են, որ այսպիսի ճշմարտութեան դուռը հասած, և մնալուն կոյր և շլացեալ աչօք կը թափառին . . . . .

Ասոր պատճառը գուցէ ըստ մասին Քահանայապետն ըլլայ · ինչու որ իր շատ բառերու վրայ այնպիսի թանձր քող մի կայ, որ շատ անգամ դիւրին չէ իմանալ թէ ինչ նշանակութիւն ունին ։ Սակայն արդարև փափագելի է որ այսուհետև քաղաքային և մանաւանդ ազգային նիւթերու վրայ գրելու ատենը աւելի անկեղծութիւն մը ՚ի գործ դնէ · որպէսզի ամէն մարդ հասկընայ, և գուցէ մէկ հեղ կարդալու ատենը ըմբռնէ ։

Եթէ Բողոքականը իր ամէն գործածած բառերը միշտ սահմանելով և բացայայտ կերպիւ դրած ըլլար , դա-ցէ մինչև հիմա Հայերը լուսաւորեալ , և կատարելապէս լուսաւորեալ ըլլային , և հետևաբար Հռոմի մէջ եղած-ները լաւ մը տեսնէին : Բողոքականին կրօնաւոր հրատա-րակիչներուն չվայելեր մէկ կողմէ երկդիմի և ծածուկ բառերով իրենց միտքը յայտնել , և միւս կողմէ , գանգատիլ որ Հայերը կը կասկածին · մէկ կողմէ , Ս. Գրոց մտացը չեղող նախին հերետիկոս ըսել , և մէկալ կող-մէ , գանգատիլ թէ՝ ինչու հերետիկոսները զիրենք գիտնական կ՚անուանեն . . . Ո՛ս փարմաւնքը Եւրոպայի լուսաւորութեան օրինաց դէմ է · չեմ գիտեր թէ ար-դեօք Հռոմի լուսաւորութեան ալ դէմ է · ասոր վրայ ներելի է տարակուսիլ :

Մխիթարեանք , գիտցած ըլլաք որ մենք ձեզ յան-ցանք չենք սեպեր ձեր դաւանութիւնը և կրօնը : Եր-բեք չենք հարցըներ և իրաւունք ալ չունինք հարցը-նելու՝ թէ ինչու համար Հռոմի քահանայապետին լուծին տակը մտեր էք · այդ ձեր և ձեր պարանոցին գիտնալու բանն է · մեզ ոչ փոյթ և ոչ հարկ է , ին-չու որ Ներքին համոզումը սուրբ և պաշտելի բան է , բաւ Հայ մը մնա օրերս · բաւական է որ սա Ներքին համոզումը ոտքէն դուրս ելլելու առենը մերկանդամ ելլէ և ա-մէնուն տեսներև ըլլայ · որպէս զի արտաքին խղճմտանք մը չերևի ան · և հետևաբար կռիւի առիթ մը չըլայ :

Մխիթարեանք , դուք խոստովանութեան կողմնակից և ջատագով էք , և իրաւունք չունիք չէ սա բանիս վրայ : Եթէ շատ անգամ ամէն տեսակ աղջիկներ , ա-մէն միջակի կիներ , ամէն հասակի մանուկներ , ամէն աստիճանի մարդիկներ կը խոստովանցնէք , երբեմն դուք ալ խոստովանելու կերթաք և կը խոստովանիք իսկ : Ուրեմն ձեզի համար ծանր բան չէ հիմա ծունր դնել և բոլոր ազգին առջևը ձեր սրտին ծածուկ բա-ները մէկիկ մէկիկ յայտնել : Արդ ժամանակը եկաւ · խոստովանելու հրամայեցէք , կ՚աղաչեմ : Մ՛ի դողաք ,

մի՛ կարմրիք, մի՛ ամչնաք, ձեզ արդար խոստովանահայր մը գտայ։ Այս խոստովանահայրը գրեթէ երեք չորս հազար տարուան ծերունի ազգ մի է. և որովհետև դուք անոր վրայ բաւական սէր և հոգ ունիք և անոր աղէկութիւններ քրած էք. ստոյգ եմ անիկա ալ ներողամիտ աչքով պիտի նայի ձեզ և եթէ բան մը չպահէք ներսերնիդ, անհոգ եղիք թողութիւն կ'ընդունիք . . . . . . ։

Ուրեմն հրամայեցէ՛ք, յառա՛ջ մտիք, պատասխանեցէ՛ք։

Ձեր Հայոց ազգը հերետիկոս անուանելը ներքին համոզմո՞ւնք է թէ չէ՛։ Այո՛ կամ ո՛չ ըսեցէ՛ք հեզ մը, Հայերը հերետիկոս ե՞ն թէ չէ՛։

Այո՛ կամ ո՛չ. Հայերը ուղղափա՞ռ են թէ չէ՛։

Հայերը հերձուածո՞ղ են, այո՛ կամ ո՛չ։ Երկար խօսք պէտք չէ ճգնաժամը հասաւ, ինչպէս կ'ըսէ Եւրոպա կրօնական լրագիրը։ Դո՛ւք ալ, Վիեննայի Մխիթարեանց պէս, ձեր ներքին համոզումը ըսեցէք. ո՛չ առաքինութք, ո՛չ գիտութեամբ, ո՛չ ուղղափառութեամբ անոնցմէ վար կը մնաք. ինչո՞ւ համար անոնց չափ անկեղծութիւն պիտի չունենաք. նայեցէք աս ձեզ չվայելեր։ Ըսեցէք մի՛ քաշուիք. դուք ալ Վիեննայի Մխիթարեանց հետ միամիտ միաբա՞ն էք թէ չէ՛. ըսեցէք ի՞նչ տարբերութի ունիք անոնցմէ, և ի՛նչ յարաբերութիւն ունիք անոնց հետ։

Միթէ դուք ալ Վիեննացւոց պէս, հռոմէականութեան ծոցէն ելած ու հռոմէականութեան համար կեցած, միայն հռոմէականութեա՞ն համար կը փնտռէ. այո՞ կամ ո՛չ.

Այո՞ կամ ո՛չ, Վիեննացւոց պէս ձեզ ալ շարժող զօրութիւնը հռոմէականութեա՞ն շահն է թէ չէ։

Ըսեցէք, դուք ալ Վիեննացւոց պէս նոյն նպատակը և առաջնորդական պաշտօնը ունի՞ք թէ չէ։

Դուք ալ Վիեննացւոց պէս, ձեր ամէն ճիգը հռոմէականութեան համար դրած՝ ամենայն ինչ հռոմէականութեան շահո՞ւն կը գործէ՞ք.

Դուք, որ երբեմն Հայոց ազգին շահասիրութեանը

դէմ գրած էք ; ըսեցէք , ինչ կը նշանակէ աս նոր տեսակ շահասիրութիւնը ։ Այո կամ ոչ , ըսեցէք , դուք ալ Վեննայի միաբանութեան պէս , աս շահասիրութիւնը երանի՞ է յանցանք կը սեպէ՞ք թէ չէ ։

Ըսեցէ՛ք , մի՛ ամչնաք , ինչ որ ձեր ձեռքէ ընդունուած է մեր ազգը ամենն ալ հռովմէական պարգև է ։ այո՞ կամ ոչ ։

Այո կամ ոչ ։ ձեր Արևելք առաքած ծրար ծրար գիրքերը հռովմէական պարգև՞ են թէ չէ

Բողոքականը , չնաշխարհիկ Բողոքականը , Նորոգ լրագրին պէս հռովմէակա՞ն պարգև է ։ այո՞ կամ ոչ ։

Հռովմէական պարգև՞ են թէ չէ , ձեր ան ձրի տուած Բողոքականները և ուրիշ գիրքերը ։

Այո՞ կամ ոչ , ըսեցէ՛ք , Հայազգիին առակով ձեր տպած գիրքերը հռովմէակա՞ն պարգև են թէ չէ ։

Միթէ դուք ալ Վիեննայի միաբանութեան պէս կը կարծէ՞ք՝ թէ հռոմէական հայերը , Հայոց ազգին մտացի մասն են ։ այո՞ կամ ոչ ։ Ըսեցէ՛ք , եթէ անոնք ազգին մտացի մասն են , մենք , որ հռոմէական չենք և բնաւ ամենևին մինչև 'ի կատարած աշխարհի չպիտի ըլլանք , ազգին անմտացի կամ անմիտ մասն ենք ։ այո՞ կամ ոչ ։ ըսեցէ՛ք , աս ալ ներքի՞ն համոզում է թէ արտաքին Բռնամանք ։

Ըսեցէ՛ք հեղ մը , մէ՛կ հեղ մը միայն , ո՛վ լուսանորոգ Մխիթարեանք , ըսեցէ՛ք ։ որպէս զի մեր աչքերը պատող մշուշը փարատի , մեր սիրտը տակն ու վրայ ընող կասկածը անհետանայ , Ճշմարտութեան լոյսը ծագի մեր մտքին մէջը . . . որպէս զի ականջնիս արթըննայ , բերաննիս բացուի և մենք բոլոր աշխարհի առջևը կարող ըլլանք ձեզ շնորհակալ ըլլալ , որ զմեզ լուսաւորել կ'աշխատիք ։

Դարձեալ կը հայցեմ , ըսեցէ՛ք , դուք ալ Վիեննայի Մխիթարեանց պէս հռոմէականութեան ծոցէն ելած , ու հռոմէականութեան համար հեծած , միայն հռոմէականութեան համար կը տքնէք , որպէս զի մենք ալ գիտնանք ձեր Մխիթար Աբբահօր տուած լուսանորոգ ածականին ծանրակշիռ զօ-

րութիւնը ։ Վասն զի եթէ դուք ալ անոնց հետ համակամ էք, հարկաւ ձեր երկուքին արմատը նոյն է ․ և որովհետև մէկ ծառէ երկու ազգ պտուղ յառաջ չգար․ կամ մէկ ակնէ երկու տեսակ ջուր չելլեր, բնականաբար կրնամք հետևցընել թէ դո՛ւք ալ մէկ հայր և մէկ ծնող ունիք ։ Ուսկէ կը հետևի նաև թէ ձեր աս միակ հայրն ալ, այսինքն Մ՛խիթար Աբբան հռոմէականութեան ծոյլ եղած — հռոմէականութեան համար հեծած միայն հռոմէականութեան համար կը փնտէր, որչափ որ աս աշխարհիս վրայ էր, և հիմա ալ երկինքը հռոմէականութեան համար կը տևէ, և մինչև յաւիտեան պիտի տևէ ։

Եթէ արդ այդպէս է, չկայ Հայ մը՝ ո՛րչափ կարճամիտ և բթամիտ և ըլլէ, որ մէկէն չիմանայ Լատինորդ ածականին բուն զօրութիւնը, և բերանալիր չծիծաղի ։

. . . . .

Իսկ եթէ դուք Վեննայի Մ՛խիթարեանց հետ միայն համամիտ էք, կ'աղաչեմ, զան ալ յայտնեցէք, որ գոնէ մեր հետաքրքրութիւը լցուի, և ստուգիւ գիտնենք թէ՝ ո՛վ է ճշմարիտ Մ՛խիթարեանը, ո՛վ է հարազատ որդի, կամ թէ ո՛վ է անհարազատ ծնունդ․ թէ ո՛րն է բուն, և ո՛րն է պատուաստեալ ճիւղը . . . որպէս զի գիտնենք թէ ո՛րն է անարատ գինին, կամ ո՛րն է ջուրը, և ըստ այնմ կարգադրենք մեր յարաբերութիւնները ձեզի հետ, կամ հիմնովին դադրեցընենք զանոնք, որն որ ըստ իմ կարծեաց շատ փառաւոր բան մը չըլլար ։

Հաճեցէք կ'աղաչեմ աս նիւթիս վրայ հռոմէական պարգև մը ևս ընել, և անկէ ետև եթէ յաւիտեան ձեր բերանը չբանաք և գրիչը չշարժէք ձեզմէ չենք գանգատիր, մանաւանդ թէ բոլորով սրտիւ շնորհակալ կըլլանք ձեզ ։

Գիտցած ըլլաք, ո՛վ Լատինորդ և Լուսաւորիչ Մ՛խիթարեանք, աս երբ ածականը իբրև Հայկական պարգև կըրնաք ընդունիլ և ձեզ սեփհականել) որ եթէ համա-

ւոր կերպիւ մը , այն՝ կամ ո՛չ ըսելով , պատասխան մը տաք մեզ , ան տանինը ճշմարիտ ըստատութեան մը կը ծագի աղէկս վրայ . որով կը յուսամ թէ դուք ալ գոհ կ՚ըլլաք , և ալ աւելի արցունք չենք թափեր մեր մոլորութեան և տգիտութեանը համար .

Կարծեմ թէ Ռուզմաճեանը ասոր բանալիք մը չունի . . . . բայց դու , Ա.յրտուրայ որդի , ասոր ի՞նչ կ՚ըսես :

— Ես ալ ասոր բանալիք մը չունիմ , հիմա հասկըցայ թէ ի՛նչ ըսել է հոռմէական պարգևը .



<< Ազգային գրադարան
NL0257036